Արձանագրություն N 3
«ՀՀԱՆԹԿ-ՇՀԱՊՁԲ–15/1-2-16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան «25» «հոկտեմբերի» 2016թ.
ժ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մելքումյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Մարգարյան

Ա. Խառատյանը

Հ. Ավետիսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Երիցյանը

1. **«ՀՀԱՆԹԿ-ՇՀԱՊՁԲ–15/1-2-16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման (մրցույթի գնային առաջարկների արդյունքների ամփոփման) մասին**

1.1 «ՀՀԱՆԹԿ-ՇՀԱՊՁԲ–15/1-2-16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են ք. Երևան, Հալաբյան 41ա, 11-րդ հարկ հասցեում:

1.2 սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.	«Մաքսիուր» ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8, հեռ. 52-67-51
2.	«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1, հեռ. 54 09 11

1.3 Գնային առաջարկ չեն ներկայացրել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայբագրեր կնքած մնացած մասնակիցները:

1.4 Հայտեր ներկայացրած «Մաքսիուր» և «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

1.5 «ՀՀԱՆԹԿ-ՇՀԱՊՁԲ–15/1-2-16» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված «Մաքսիուր» ՍՊԸ-ը փակ կնքված ծրարով ներկայացրել է՝ գնային առաջարկ, ինքնարժեքի հաշվարկ, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան ապրանքի մատակարարման մասին բացառությամբ Մասնագիտական փորձառության մասին Հայտարարությունը (Հավելված 3.2) : Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեներից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են Մասնակցի կողմից:

1.6 «ՀՀԱՆԹԿ-ՇՀԱՊՁԲ–15/1-2-16» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ը փակ կնքված ծրարով ներկայացրել է՝ գնային առաջարկ, ինքնարժեքի հաշվարկ, հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան ապրանքի մատակարարման մասին: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեներից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են Մասնակցի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2. Մասնակիցների առաջարկած գներն են՝

Չափաբաժին 1

(ՀՀ դրամ)

Մասնակից	Արժեք	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4=2+3*
«Մաքսիուր» ՍՊԸ	273333,33	54666,67	328000 (երեք հարյուր քսանութ հազար)
«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	275000	55000	330000 (երեք հարյուր երեսուն հազար)

2.1 «Մաքսիուր» և «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկներում թվաբանական անճշտություններ չկան:

3. Համաձայն ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168 Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168 Ն որոշման 45-կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

4. Հանձնաժողովը որոշեց՝

   Կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «Մաքսիուր» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը՝ ներկայացնել հայտարարություն մասնագիտական փորձառության մասին (Հավելված 3.2)

   Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2016 թվականի հոկտեմբերի 27-ին ժամը 11:00-ին ք. Երևան, Հալաբյան 41ա հասցեով:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ.Մելքումյան

Անդամներ՝

_____ Լ. Մարգարյան

_____ Ա. Խառատյան

_____ Հ. Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Երիցյան